	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 1/28</i>	

ՆՊԱՏԱԿԸ


«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում հաշվառվող արժեթղթերի պահառության ծառայությունների միջնորդավորման ընթացակարգի նպատակն է սահմանել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) արժեթղթերի սեփականատերերին կամ անվանատերերին (այսուհետ՝ Հաշվետեր) մատուցվող պահառության ծառայությունների միջնորդավորման գործընթացները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ


Սույն ընթացակարգը կիրառվում է Բանկի ֆինանսական տնօրինության կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք	
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք	
ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք	
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»	
«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ սակագների մասին կանոններ	
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07	
«Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգ» Կանոնակարգ 5/10	
«Արժեթղթերի պահառության գործունեությունը» Կանոնակարգ 33	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ վարվելակերպի և ներքին կարգապահության կանոններ	POLICY 07
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ընթացիկ (հաշվարկային) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման ընթացակարգ	ACBA 72 PR 01
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական արժեթղթերի ռեեստրի վարման միջնորդավորման ընթացակարգ	ACBA 75 PR 41
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներ	TC 01-06
Արժեթղթերի պահառության պայմանագիր	eFO 72-00-650
Ռեեստրի վարման պայմանագիր	eFO 72-00-651
Ենթապահառության պայմանագիր	eFO 72-00-652
Լրացուցիչ ծառայությունների մատուցման պայմանագիր	eFO 72-00-653

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 2/28</i>	

Թողարկողի արժեթղթերի պահառության պայմանագիր	eFO 72-00-654
Ենթապահառության համաձայնագիր օտարերկրյա արժեթղթերի պահառության համար	eFO 72-00-655
Բաժնային սեփականություն հանդիսացող արժեթղթերի պահառության պայմանագիր	eFO 72-00-656
Հաշվետիրոջ քարտ	eFO 75-40-01
Արժեթղթերի հաշվի փակման հանձնարարական	eFO 75-40-02
Արժեթղթերի փոխանցման հանձնարարական	eFO 75-40-03
«Առաքում վճարման դիմաց» կամ «Ազատ առաքում համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարական	eFO 75-40-04
«Առաքում վճարման դիմաց» կամ «Ազատ առաքում համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի ձեռքբերման հանձնարարական	eFO 75-40-05
Հաշվետիրոջ պորտֆելի փոխանցման հանձնարարական	eFO 75-40-06
Արժեթղթերի գրավադրման հանձնարարական	eFO 75-40-07
Արժեթղթերի գրավադրման դադարեցման հանձնարարական	eFO 75-40-08
Արժեթղթերի հաշվի սառեցման հանձնարարական	eFO 75-40-09
Արժեթղթերի հաշվի սառեցման դադարեցման հանձնարարական	eFO 75-40-10
Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման հանձնարարական	eFO 75-40-11
Համաձայնություն ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող արժեթղթերը օտարելու/գրավադրելու մասին	eFO 72-00-227
Հայտարարություն արժեթղթերի նկատմամբ իրավունքների մասին	eFO 72-00-228
Արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ ծանուցում	eFO 75-40-12
Քաղվածք արժեթղթերի հաշվից	eFO 75-40-13
Հաշվետվություն իր արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ	eFO 75-40-14
Հաշվետվություն արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ	eFO 75-40-15
Տեղեկությունների ստացման դիմում	eFO 75-40-16
Արժեթղթերի հաշվի հասանելիության տրամադրման հանձնարարական	eFO 75-40-17
Արժեթղթերի հաշվի հասանելիության փակման հանձնարարական	eFO 75-40-18
Պարտատոմսերի գնման/վաճառքի հանձնարարական	(ՀՏ 520/521)

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 3/28</i>	

Պարտատոմսերի ազատ առաքման հանձնարարական	(ՀՏ 522)
Պարտատոմսերի գրավադրման/գրավ ընդունման հանձնարարական	(ՀՏ 540/541)
Պարտատոմսերի գրավադրման միակողմանի հանձնարարական	(ՀՏ 542)
Պարտատոմսերի գրավից հանման գրավառուի/գրավատուի հանձնարարական	(ՀՏ 543/544)
Պարտատոմսերի գրավից հանման միակողմանի հանձնարարական	(ՀՏ 545)
Գրավադրված պարտատոմսերից հրաժարման հանձնարարական	(ՀՏ 546)
Պարտատոմսերի գրավի փոխարինման գրավատուի /գրավառուի հանձնարարական	(ՀՏ 547/548)
Պարտատոմսերի գրավատուի փոխարինման հանձնարարական	(ՀՏ 549)
Պարտատոմսերի գրավառուի փոխարինման հանձնարարական	(ՀՏ 550)
Պարտատոմսերի արգելադրման /արգելանքից հանման հանձնարարական	(ՀՏ 560/561)
Արգելադրված պարտատոմսերի փոխանցման հանձնարարական	(ՀՏ 562)

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թողարկող՝ այն իրավաբանական անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում.

Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք.

Համակարգ՝ Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ, որը բաղկացած է Արժեթղթերի կենտրոնացված հաշվառման համակարգից (ներառում է արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և արժեթղթերի պահառության համակարգերը) և Արժեթղթերի հաշվարկային համակարգից (ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ գլխի նշանակության).


Կանոններ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ.

Արժեթղթերի հաշիվ՝ Արժեթղթերի և դրանց նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների անձնավորված հաշվառման տեղեկատվական հենք.

Դեպո հաշիվ՝ Պեղական պարտավորումների հաշվառման համար նախատեսված «արժեթղթերի հաշիվ».

Դեպո հանձնարարական՝ Համակարգում պեղական պարտավորումներով գործառնություններ կատարելու հանձնարարական.

Հաշվի Օպերատոր՝ Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Հաշվետիրոջից կամ Թողարկողից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիային Համակարգում գործառնությունների կատարման համար, ինչպես

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ</i> 19/11/19	<i>Խմբագրություն</i> 9	<i>Էջ</i> 4/28

նաև Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրին համապատասխան միջնորդավորում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայությունները.

Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ կամ ԿՇՀՀԱ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության Կանոններով սահմանված և Համակարգի անդամին վերաբերվող պահանջներին բավարարող անձ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով և կանոններով սահմանված իրավասությունների շրջանակում, Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցում իր կամ իր հաճախորդից ստացված այն հանձնարարականները և տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Համակարգի միջոցով կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքների կնքման համար.

Ծրագրային համակարգ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Բանկում տեղադրված ծրագրային ապահովում, որի միջոցով իրականացվում են ռեեստրի վարման, պահպանման և պահառության գործառույթները.

Հաշվետեր՝ անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ և նրա անունով Բանկում բացված է Հաշվետիրոջ քարտ [eFO 75-40-01](#).

Լիազորված անձ՝ անձ, որը նշանակված է Հաշվետիրոջ կողմից Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվով (արժեթղթերի հաշվի բաժնով) պահառության գործառնությունների իրականացման նպատակով.

Գործառնություն՝ Համակարգում արժեթղթի Հաշվետիրոջ, Թողարկողի, վերջիններիս լիազորված ներկայացուցիչների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց հանձնարարականի հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն, թողարկողի արժեթղթերի ռեեստրում այլ գործողությունների գրանցում և/կամ Համակարգից տեղեկությունների տրամադրում.

Հաշվառման ամսաթիվ՝ Ամսաթիվ, որի դրությամբ հաշվետիրոջ անունը և ազգանունը (անվանումը) պետք է Թողարկողի ռեեստրում նշված լինի իրեն պատկանող (իր անվամբ գրանցված) արժեթղթերով հավաստված իրավունքներն իրականացնելու համար.

Հանձնարարական՝ Համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ.


Հարցում՝ Համակարգից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարական.

Անվանալեր՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը.

Ազգաբաժնի կամ ST փոխանցում՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմից հաստատում կամ համաձայնություն.

Ազգաբաժնի համաձայնությամբ կամ FOP փոխանցում՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և՛ փոխանցող, և՛ ստացող կողմերի համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ.

Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և՛ փոխանցող, և՛ ստացող կողմերի համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ, ինչպես նաև DVP փոխանցման համար իրավասու դրամական հաշվից փոխանցված և Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվին առկա DVP փոխանցման արդյունքում վերջնահաշվարկի ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցների առկայություն.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 5/28</i>	

Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի արդյունքում արժեթղթերի հաշվին առկա արժեթղթերի ամբողջ պորտֆելի փոխանցումն իրականացվում է փոխանցման մեկ գործառնության գրանցմամբ:

DVP փոխանցման համար իրավասու դրամական հաշիվ Հաշվի Օպերատորին պատկանող դրամական միջոցների հաշիվ, որից կարող է իրականացվել միայն DVP փոխանցման նպատակով դրամական միջոցների փոխանցումը առևտրային հաշվին, և որի վրա միայն կարող են փոխանցվել DVP փոխանցմամբ վերջնահաշվարկի իրականացման արդյունքում առաջացած դրամական միջոցները առևտրային հաշվից:

Բաժնային սեփականություն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույք, որի սեփականության իրավունքում որոշված է սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը:

Համապեղ սեփականություն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույք, որի սեփականության իրավունքում նշված է սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը:

Պետական պարտավորում ՀՀ ֆինանսների նախարարության պետական (գանձապետական) կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր:


Օտարերկրյա արժեթուղթ օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության, օտարերկրյա պետության կողմից գրանցված իրավաբանական անձի կամ ներդրումային հիմնադրամի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող գույքային համալիրի կողմից թողարկված արժեթուղթ, որի սեփականատերերի ռեեստրը չի վարվում կամ չի վարվել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից: Ընդ որում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Օտարերկրյա արժեթղթերի պահառության համար կանոններով սահմանված սկզբունքները կիրառվում են նաև Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված Թողարկողի անունից (կողմից) օտարերկրյա պետություններում և/կամ օտարերկրյա արժույթով տեղաբաշխված այն արժեթղթերի դեպքում, որոնց պահառությունն իրականացնելիս Կենտրոնական դեպոզիտարիան հանդես է գալիս որպես Օտարերկրյա պահառուի ենթապահառու:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բանկը հանդիսանում է Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամ, որին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհվել է Հաշվի Օպերատորի կարգավիճակ:

1.2. Բանկը Համակարգում իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Արժեթղթերի սեփականատերերին (անվանատերերին) մատուցվող ծառայությունների միջնորդավորում Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում:

1.3. Համակարգում տեղեկությունների փոփոխությունները, գործառնությունների գրանցումները, ինչպես նաև տեղեկությունների տրամադրումն իրականացվում է Կենտրոնական գրասենյակում՝ Դիլինգի բեք օֆիսի աշխատակցի (այսուհետ՝ Պատասխանատու աշխատակից), կողմից: Ընդ որում Բանկն իր գործառնական ռիսկերը նվազեցնելու նպատակով սահմանել է իրավասու աշխատակիցների եռամսկարգակ վերահսկողություն: Պատասխանատու աշխատակցի կողմից Ծրագրային համակարգում ցանկացած գործառնության իրականացումը, ելնելով երկրորդ ասքի սկզբունքից, Կենտրոնական գրասենյակում պետք է հաստատվի Դիլինգի բաժնի պետի կողմից՝ Ծրագրային համակարգում համապատասխան հաստատման միջոցով: Ծրագրային համակարգում ցանկացած հասանելիություն տրամադրում է Ադմինիստրավորման բաժնի համապատասխան աշխատակիցը, ով հանդիսանում է վերահսկողության երրորդ մակարդակը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 6/28</i>

1.4. Բանկը պարտավոր է ստացված հանձնարարականները մուտքագրել Համակարգ՝ սույն ընթացակարգով սահմանված ժամկետներում, եթե հանձնարարականը տված անձն ավելի երկար ժամկետ չի սահմանել:

1.5. Բանկը, նախքան ստացված հանձնարարականի հարցման մուտքագրումը Համակարգ, պարտավոր է ստուգել հանձնարարականը ներկայացրած անձի իրավասությունները: Ընդ որում՝ Բանկը սույն ընթացակարգով սահմանված ծառայություններ մատուցելիս գործում է միայն Թողարկողի, Թողարկողի լիազորված ներկայացուցչի, Հաշվետիրոջ, Հաշվետիրոջ լիազորված ներկայացուցչի կողմից ներկայացված հանձնարարականի կամ հարցման հիման վրա, եթե Օրենքով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով այլ բան սահմանված չէ:

1.6. Բանկը պարտավոր է ստուգել իր կողմից արժեթղթերի Համակարգում գործառնությունների իրականացման հանձնարարականների ճշտությունը: Բանկը պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված պահանջի խախտման համար:

1.7. Պատասխանատու աշխատակիցը ստացված հանձնարարականը անհրաժեշտության դեպքում կարող է փոխանցվել Բանկի իրավաբանական վարչություն՝ տվյալ փաստաթղթի վիճելի դրույթների վերաբերյալ գրավոր եզրակացություն տալու համար: Ընդ որում՝ Իրավաբանական վարչության կողմից եզրակացությունը պետք է տրվի հանձնարարականի (հարցման) ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

1.8. Բանկը պարտավոր է պահպանել Համակարգում գրառման իրականացման համար հիմք հանդիսացած հանձնարարականները և հարցումները՝ դրանք ստանալուց 10 տարվա ընթացքում:

1.9. Բանկի կողմից Հաշվետիրոջ համար արժեթղթերի հաշիվ կարող է բացվել հետևյալ 2 եղանակներից որևէ մեկով.

ա) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված և ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի վերաբացմամբ, որը ենթադրում է նաև սույն ընթացակարգով սահմանված նույնականացում, եթե տվյալ անձը Կենտրոնական դեպոզիտարիայում ունի արժեթղթերի հաշիվ,

բ) Արժեթղթերի նոր հաշվի բացմամբ:

1.10. Յուրաքանչյուր Արժեթղթերի հաշվի համար Ծրագրային համակարգում գեներացվում է անհատական տարբերակիչ համար: Տարբերակիչ համարը Համակարգում վարվող արժեթղթերի հաշիվների հերթական համարն է (հաշվեհամարը), որի կառուցվածքը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից:

1.11. Միևնույն անձի համար Բանկը Համակարգում կարող է բացել նույն տեսակի միայն մեկ հաշիվ, բացառությամբ՝ ընդհանուր սեփականության հաշիվների բացման դեպքերի:


ԳՆՈՒՄ 2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Բանկի միջնորդությամբ Համակարգում կարող են բացվել արժեթղթերի հաշիվների հետևյալ տեսակները.

ա) Սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով,

բ) Անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար,

գ) Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է օտարերկրյա պահառուների համար այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար,

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 7/28</i>	

դ) Թողարկողի արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են թողարկողի տիրապետման տակ գտնվող (այդ թվում՝ ձեռքբերված կամ հետգնված) իր կողմից տեղաբաշխված արժեթղթերը,

ե) Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որտեղ հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց՝ սահմանված բաժնային համամասնության սկզբունքով,

զ) Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց համատեղ սեփականության իրավունքով:

Համակարգում կարող են բացվել նաև գործառնական հաշիվների հետևյալ տեսակները.

ա) Տեղաբաշխվող արժեթղթերի հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է կարգավորվող շուկայում արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնելու համար: Տեղաբաշխվող արժեթղթերի հաշվին հաշվառվում են թողարկված և դեռևս չտեղաբաշխված արժեթղթերը,

բ) Գրավառուի գրավային հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է արժեթղթերի գրավադրման գործառնությունը գրանցելու համար, եթե գրավատուն չի ներկայացնում գրավառուի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի համարը կամ գրավառուն Համակարգում չունի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ,

գ) Դեպո ենթահաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի ներքո՝ պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և դրանց սահմանափակումների հաշվառման համար,

դ) Արժեթղթերի տեխնիկական հաշիվ, որը Կարգավորվող շուկայում առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերի հաշվառման համար նախատեսված հաշիվ է,

ե) Book Entry հաշիվ, որը բացվում է Համակարգից դուրս՝ այլ ենթապահառումների մոտ գտնվող պետական պարտատոմսերի ամփոփ հաշվառման համար,

զ) Դրամական վերջնահաշվարկի հաշիվ:


2.2. Համակարգում բացված արժեթղթերի հաշիվը կարող է ունենալ հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.

ա) «Ժամանակավոր հաշվի կարգավիճակ» (այսուհետև՝ Արժեթղթերի ժամանակավոր հաշիվ) կարգավիճակ, որը տրվում է թողարկողի կողմից ռեեստրի վարման պայմանագրի կնքման շրջանակում ներկայացված տվյալների (անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի) հիման վրա համակարգում բացված արժեթղթերի հաշիվներին, ինչպես նաև Համակարգում բացված (վերաբացված) արժեթղթերի այն հաշիվներին, որոնց սպասարկման իրավունքը Բանկին վերապահված չէ և որոնցով գործառնություն իրականացնելու իրավունքը՝ Կանոններով սահմանված դեպքերում և կարգով, վերապահվում է միայն Կենտրոնական դեպոզիտարիային,

բ) «Չնույնականացված հաշվի կարգավիճակ» (այսուհետև՝ Արժեթղթերի չնույնականացված հաշիվ) տրվում է Բանկի կողմից արժեթղթերի ժամանակավոր հաշվի վերաբացման գործառնության իրականացման ընթացքում չնույնականացված արժեթղթերի հաշվին,

գ) «Ակտիվ հաշվի կարգավիճակ» (այսուհետև՝ Արժեթղթերի ակտիվ հաշիվ) տրվում է Բանկի կողմից բացված կամ վերաբացված հաշվին, որի նկատմամբ Բանկի հասանելիության իրավունքը դադարեցված չէ,

դ) «Ժառանգության արդյունքում վերաբացված հաշվի կարգավիճակ» կարգավիճակ, որը տրվում է Բանկի կողմից բացված (վերաբացված) այն հաշվին, որից պետք է իրականացվի ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի փոխանցում ժառանգ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 8/28</i>	

ԳԼՈՒԽ 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

3.1. Հաճախորդի ցանկություն.

3.1.1. Գովազդի, մարքեթինգային միջոցառումների, գովազդային բուկլետների, Բանկի ինտերնետային կայքի, հաճախորդների արձագանքների, Բանկի աշխատակիցների կողմից տրված տեղեկատվության միջոցով հավանական Հաճախորդները ծանոթանում են Բանկի միջնորդությամբ Համակարգում Հաշվետերերին արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման բոլոր պայմաններին:

3.2. Պայմանների տեղեկացում և հաճախորդի որոշում.

3.2.1. Պատասխանատու աշխատակցի կողմից հավանական Հաշվետիրոջը բանավոր կերպով տեղեկացվում են Արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման պայմանները և սակագները [TC 01-06](#): Հաճախորդի ցանկությամբ Պատասխանատու աշխատակցի կողմից նրան կարող են տրամադրվել նաև Բանկի սակագների համապատասխան հատվածի տպագրված տարբերակը, ինչպես նաև այլ հրապարակվող տեղեկատվական նյութեր:

3.2.2. Պատասխանատու աշխատակիցը բանավոր բացատրում է ծառայությունից օգտվելիս ի հայտ եկող հիմնական ռիսկերը, ծառայության տրամադրման հետ կապված այլ ծախսերի առաջացման ղեպքերը և ծավալները, եթե դրանք հայտնի են վերջինիս, թվարկում ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3.2.3. Արժեթղթերի պահառության ծառայությունների վերաբերյալ տեղեկացումից հետո Հաճախորդը կայացնում է իր որոշումը: Ծառայությունից օգտվելու համաձայնության ղեպքում անցում է կատարվում սույն գլխի հաջորդ կետին, իսկ անհամաձայնության ղեպքում գործընթացն ավարտվում է այս փուլում:

3.3. Պայմանագրի կնքում.

3.3.1. Բանկն արժեթղթերի հաշվի բացման համար Հաշվետիրոջ հետ կնքում է Արժեթղթերի Պահառության գրավոր պայմանագիր [eFO 72-00-650](#) ֆիզիկական և իրավաբանական անձանց սույն ընթացակարգով նույնականացնելու և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու ղեպքում:

3.3.2. Ֆիզիկական անձի Արժեթղթերի հաշվի բացման համար Բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

ա) Հաշվետիրոջ լրացված քարտը [eFO 75-40-01](#),


բ) տվյալ ֆիզիկական անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը, լիազորված ներկայացուցչի առկայության ղեպքում նաև նրա անձը հաստատող փաստաթուղթը,

գ) ՀՀ ռեզիդենտ Հաշվետիրոջ հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու ղեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ Հաշվետերերի ղեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության ղեպքում),

դ) անհրաժեշտության ղեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերը պետք է ներկայացնի նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրա կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

3.3.3. Բանկն արժեթղթերի հաշվի վերաբացման գործընթացում Հաշվետիրոջից ստանում է սույն ընթացակարգի 3.3.2 ենթակետով սահմանված փաստաթղթերը:

3.3.4. Բանկը Հաշվետեր հանդիսացող անձի համար արժեթղթերի հաշիվ բացելիս պարտավոր է Հաշվետիրոջ կողմից իրեն ներկայացված համապատասխան փաստաթղթերի և տվյալների հիման վրա Համակարգում ստուգել տվյալ Հաշվետիրոջ համար Կենտրոնական ղեպագրիտարիայի կողմից

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 9/28</i>

բացված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվի առկայությունը: Ստուգման նպատակով Բանկը Հաշվետիրոջ քարտում [eFO 75-40-01](#) ներկայացված տվյալները մուտքագրում է Կենտրոնական դեպոզիտարիայի ծրագրային համակարգ: Համակարգ են մուտքագրվում հետևյալ տեղեկությունները, որոնք հայտնի են Հաշվետիրոջ ներկայացրած տվյալներից.

ա) անունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում)՝ ֆիզիկական անձի դեպքում, անվանումը (այնպես, ինչպես նշված է պետական գրանցման փաստաթղթում)՝ իրավաբանական անձի դեպքում,

բ) ազգանունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում),

գ) անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ իրավաբանական անձանց դեպքում,

դ) բնակության վայրը՝ ֆիզիկական անձի դեպքում, փոստային հասցեն՝ իրավաբանական անձի դեպքում,

ե) ծննդյան ամսաթիվը՝ ֆիզիկական անձանց դեպքում,

զ) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը,

է) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը (առկայության դեպքում), որը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրվել է մինչև սույն կանոնների ընդունումը,

ը) Թողարկողի անվանումը կամ արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն (նշվում է այն դեպքում, եթե տվյալ անձն արդեն իսկ որևիցե ընկերության արժեթղթերի սեփականատեր է),

թ) անձին պատկանող արժեթղթերի քանակը (նշվում է այն դեպքում, եթե տվյալ անձն արդեն իսկ որևէ ընկերության արժեթղթերի սեփականատեր է):

3.3.5. Ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը Բանկի կողմից համարվում է վերաբացված կամ վերաբացվում է, եթե սույն գլխի 3.3.4 ենթակետի «ա»-ից «թ» ենթակետերով սահմանված տեղեկություններից առնվազն 5 ցանկացած տեղեկություն համընկնում է Համակարգում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բացված արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների հետ և միևնույն ժամանակ նույնականացվում է:

3.3.6. Իրավաբանական անձն արժեթղթերի հաշվի բացման ժամանակ Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) Հաշվետիրոջ քարտը՝ (լրացված) [eFO 75-40-01](#),


բ) Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը, որը կարող է փոխարինվել Թողարկողի վերաբերյալ Բանկի կողմից կատարված ՀՀ ԱՆ պետ. ռեգիստրի տվյալների հարցմամբ,

գ) Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

դ) առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը (կարող է չներկայացվել Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնության դեպքում),

ե) իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

զ) լիազորագրի հիման գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը,

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 10/28</i>

է) անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերը պետք է ներկայացնի նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրա կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

3.3.7. Բաժնային և Համատեղ սեփականության հաշիվները բացելիս՝ Հաշվետերերի կողմից Բանկ են ներկայացվում Հաշվետիրոջ քարտեր [eFO 75-40-01](#), որոնք պարունակում են յուրաքանչյուր Հաշվետիրոջ համար սահմանված տեղեկությունները:

3.3.8. Ընդհանուր սեփականության հաշիվները բացվում են այն դեպքում, երբ միևնույն արժեթղթերը պատկանում են մեկից ավելի անձանց:

3.3.9. Եթե Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող որևէ արժեթուղթ սեփականության իրավունքով պատկանում է մի քանի անձանց (համասեփականատերերի), ապա տվյալ արժեթղթով պահառության գործառնության իրականացման հանձնարարական կարող է ներկայացնել միայն այդ համասեփականատերերի կողմից լիազորված անձը:

3.3.10. Օրենքով սահմանված պահառություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձինք (այսուհետ նաև՝ Պահառու) Համակարգում անվանատիրոջ հաշիվ ունենալու նպատակով պարտավոր են Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքել ենթապահառության համապատասխան պայմանագիր [eFO 72-00-652](#) Բանկի միջնորդությամբ, եթե Բանկը պետք է սպասարկի նրա անվանատիրոջ հաշիվը, իսկ եթե Պահառուն Հաշվի օպերատոր է, ապա Կենտրոնական դեպոզիտարիայի հետ ուղղակիորեն կնքում է ենթապահառության պայմանագիր:

3.3.11. Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշվի բացման գործառնությունը Համակարգում գրանցվում է սույն ընթացակարգով սահմանված տեղեկությունները կամ հանձնարարականները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3.12. Բանկը նոտարի կողմից ժառանգության հետ կապված հարցման հիման վրա նույնակա-նացված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը Համակարգի միջոցով վերաբացում է վեր-ջինիս տալով ժառանգության հաշվի կարգավիճակը՝ առանց դրանում հետագա նույնականացման գործողություններ կատարելու:

3.3.13. Ժառանգության իրավունքի գրանցումից հետո, ժառանգատուի հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշիվը ենթակա է անմիջապես փակման, եթե ժառանգատուի հաշվի մնացորդը զրո է:

ԳԼՈՒԽ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ


4.1. Արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխության դեպքում Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկ է ներկայացնում համապատասխան փոփոխությունը հավաստող փաստաթուղթը (եթե փոփոխությունը պայմանավորված է Հաշվետիրոջ անվան կամ նրա անձը հաստատող փաստաթղթի/գրանցման վկայականի փոփոխմամբ), ինչպես նաև Հաշվետիրոջ քարտ [eFO 75-40-01](#):

4.2. Բանկը հաշվի փոփոխման հանձնարարականի հիման վրա արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխությունը Համակարգում գրանցում է սույն գլխով սահմանված փաստաթղթերը և հանձնարարականները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Սույն ընթացակարգի 4.1 կետում նշված տեղեկությունները չներկայացնելու դեպքում Բանկը և Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չեն կրում հաշվետերերին պատճառված վնասի համար:

ԳԼՈՒԽ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Բանկը Հաշվետիրոջ կողմից ներկայացված տվյալների հիման վրա արժեթղթերի հաշվի նույնականացում իրականացնելիս պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 11/28</i>

5.1.1. Այն դեպքում, երբ Հաշվետիրոջ կողմից ներկայացված տեղեկություններից Համակարգում համընկել են միայն սույն ընթացակարգի 3.3.4 կետի «ա», «բ», «գ» և «ը», «թ» ենթակետերով սահմանված տեղեկությունները, ապա Բանկը տվյալ արժեթղթերի հաշվի նույնականացումն իրականացնում է միայն Թողարկողի (Թողարկողների) և/կամ անձնագրային բաժնի կողմից պատշաճ հավաստիացված տեղեկանքի (տեղեկանքների) հիման վրա:

5.1.2. Այն դեպքում, երբ Բանկի կողմից հաշվի վերաբացման դեպքում սույն ընթացակարգի 3.3.4 կետի «ա» կամ «բ» ենթակետերով սահմանված Համակարգում առկա տեղեկությունը չի համընկնում Հաշվետիրոջ կողմից ներկայացված տեղեկության հետ, ապա Բանկը պետք է Հաշվետիրոջից պահանջի Թողարկողի (Թողարկողների) կողմից պատշաճ հավաստիացված տեղեկանք և/կամ անձնագրային բաժնից համապատասխան տեղեկանք, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ Թողարկողի (Թողարկողների) կողմից տրված համապատասխան տեղեկանք և/կամ համապատասխան հիմքեր՝ տրված պետական գրանցումն իրականացրած մարմնի կողմից կամ դատարանի համապատասխան որոշում:

5.1.3. Ժառանգության իրավունքի գրանցման դեպքում նույնականացումն իրականացվում է նոտարի կողմից կատարված հարցման մեջ նշված տեղեկությունների և թողարկողի կողմից տրված տեղեկանքի հիման վրա (անհրաժեշտության դեպքում):

5.1.4. Այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվի վերաբացման գործընթացում Բանկից անկախ պատճառներով արժեթղթերի հաշիվը հնարավոր չի լինում նույնականացնել, ապա Բանկը տվյալ արժեթղթերի հաշվին տալիս է չնույնականացված հաշվի կարգավիճակ՝ արժեթղթերի հաշվում համապատասխան նշում կատարելով:

5.1.5. Եթե չնույնականացված հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշիվը սույն ընթացակարգով սահմանված կարգով չի նույնականացվում այն վերաբացման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապա Բանկը պետք է այդ մասին տեղեկացնի Կենտրոնական դեպոզիտարիային՝ նշելով արժեթղթերի հաշվի համարը:

5.1.6. Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի հաշվի նույնականացման անհնարինության մասին տեղեկությունը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում արգելափակում է Բանկի իրավասությունն արժեթղթերի հաշվի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 6. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ


6.1. Բանկի միջոցով բացված արժեթղթերի հաշիվը կարող է փակվել.

6.1.1. Հաշվետիրոջ ցանկությամբ՝ համապատասխան գրավոր Արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականի [eFO 75-40-02](#) հիման վրա,

6.1.2. Սույն ընթացակարգով սահմանված կարգով և դեպքերում:
Պահառության պայմանագրի լուծվելու դեպքում Հաշվետիրոջ ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը, մինչև դրանց ամբողջական կատարումը:

6.2. Համակարգում կարող են փակվել միայն արժեթղթերի զրոյական մնացորդով արժեթղթերի հաշիվները:

6.3. Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի ոչ զրոյական մնացորդով հաշվի փակման համար Հաշվետիրը՝ մինչև արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականի ներկայացումը, պարտավոր է հաշվում հաշվեգրված արժեթղթերի պորտֆելը փոխանցել այլ ակտիվ հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվին:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 12/28</i>

6.4. Բանկը Արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականը [eFO 75-40-02](#) Հաշվետիրոջից ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է Համակարգում, որի արդյունքում արժեթղթերի հաշիվը Համակարգում ստանում է փակված արժեթղթերի հաշվի կարգավիճակ: Արժեթղթերի հաշիվը փակվում է Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքված «Արժեթղթերի Պահառության» կամ «Արժեթղթերի Ենթապահառության» պայմանագրի լուծմամբ:

ԳԼՈՒԽ 7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունները Համակարգում իրականացվում են հետևյալ տեսակներով, որոնց մեջ չի ներառվում արժեթղթերի փոխանցման գործառնությունը, որը արդյունք է Կարգավորվող շուկայում կնքված գործարքի.

- ա) ազատ առաքում կամ ST փոխանցում,
- բ) առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում,
- գ) ազատ առաքում համաձայնությամբ կամ FOP փոխանցում,
- դ) արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում,
- ե) ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկի հետ կնքված ռեպո պայմանագրից բխող արժեթղթերի փոխանցում:

7.2. Ազատ առաքում կամ ST փոխանցում.


7.2.1. Բանկի միջնորդությամբ ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնություն կարող է գրանցվել միայն, եթե փոխանցող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվն ունի ակտիվ հաշվի կարգավիճակ, բացառությամբ ժառանգության և դատարանի վճռի հիման վրա կատարվող արժեթղթերի փոխանցման:

7.2.2. Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը գրանցելու համար արժեթղթերի փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետերը պարտավոր է դիմել Բանկ և ներկայացնել Արժեթղթերի փոխանցման հանձնարարական [eFO 75-40-03](#), ինչպես նաև Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող արժեթղթերի օտարման/գրավադրման մասին համաձայնություն՝ [eFO 72-00-227](#) կամ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների մասին հայտարարություն՝ [eFO 72-00-228](#):

7.2.3. Դատարանի վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցման դեպքում շահագրգիռ կողմը Բանկին է ներկայացնում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը, ինչպես նաև դիմում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ:

7.2.4. Այն դեպքում, երբ դատարանի վճռի հիման վրա փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվը չի վարվում Բանկի միջնորդությամբ և Բանկին է ներկայացվել համապատասխան վճիռը կամ որոշումը կամ տվյալ վճռով պատասխանող կողմ է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիան, ապա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը Բանկի կողմից այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիային:

7.2.5. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշման հիման վրա իրականացնել ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնություն Համակարգում, եթե փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվն ունի ժամանակավոր հաշվի կարգավիճակ կամ տվյալ վճռով կամ որոշմամբ պատասխանող կողմ է հանդիսանում Կենտրոնական դեպոզիտարիան:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 13/28</i>

7.2.6. Կենտրոնական դեպոզիտարիան դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումն այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում կարող է վերահասցեագրել Բանկին, եթե փոխանցող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվը ունի ակտիվ հաշվի կարգավիճակ և սպասարկվում է Բանկի կողմից:

7.2.7. Ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի ազատ առաքման համար ժառանգը պարտավոր է Բանկին ներկայացնել հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

ա) ժառանգության իրավունքի վկայականը,

բ) արժեթղթերի հաշվի բացման համար սույն ընթացակարգով սահմանված փաստաթղթերը, եթե ժառանգի (ժառանգների) համար նախկինում արժեթղթերի հաշիվ բացված չի եղել Բանկի միջնորդությամբ,

գ) անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով ժառանգը (ժառանգները) պետք է ներկայացնի (ներկայացնեն) նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրա (նրանց) կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

7.2.8. Արժեթղթերը փոխանցվում են ազատ առաքմամբ (ST փոխանցում)՝ նվիրատուի պահանջով, եթե նվիրատուն Բանկ է ներկայացնում նվիրատվության պայմանագիր: Եթե նվիրատուն Բանկին չի ներկայացնում նվիրատվության պայմանագիր, ապա արժեթղթերի փոխանցումն իրականացվում է ազատ առաքում համաձայնությամբ (FOP փոխանցում):

7.2.9. Թողարկողի արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցումները Համակարգում իրականացվում են ազատ առաքում համաձայնությամբ (FOP փոխանցում) կամ առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում) տեսակներով:

7.2.10. Անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերերը պետք է ներկայացնեն նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրանց կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

7.2.11. Բանկն ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը գրանցում է սույն գլխով սահմանված հանձնարարականը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:


7.3. Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում.

7.3.1. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով Հաշվետերերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկ է ներկայացնում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարական [eFO 75-40-04](#), որն էլ Բանկի կողմից ծրագրային համակարգ է մուտքագրվում աշխատանքային օրվա ժամը 9:30-ից մինչև 15:00-ն:

7.3.2. «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման նպատակով արժեթղթեր ստացող կողմ հանդիսացող Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկ է ներկայացնում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռքբերման հանձնարարական [eFO 75-40-05](#), որն էլ Բանկի կողմից ծրագրային համակարգ է մուտքագրվում աշխատանքային օրվա ժամը 9:30-ից մինչև 15:00-ն:

7.3.3. Արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական ներկայացրած Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը մինչև ժամանակ իրականացնում են արժեթղթերի ձեռքբերման համար վճարման ենթակա գումարի փոխանցում Բանկի «Առաքում վճարման դիմաց» գործառնության համար նախատեսված համապատասխան իրավասու հաշվին:

7.3.4. Բանկը, որպես արժեթղթեր ստացող կողմի արժեթղթերի հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատոր, իր իրավասու հաշվից BankMail համակարգի ՀՏ 100 կամ ՀՏ 202 (ՀՀ դրամի փոխանցման համար) և ՀՏ 203 (արտարժույթի փոխանցման համար) հաղորդագրության միջոցով Կենտրոնական դեպոզիտարիայի՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված դրամի առևտրային հաշվին է փո-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 14/28</i>

խանցում արժեթղթերը ձեռքբերելու համար անհրաժեշտ գումարը: Ընդ որում՝ վերոնշյալ հաղորդագրության «Նպատակ» դաշտում նշվում է DVP տառերը: Միևնույն ժամանակ Համակարգում գրանցում է նաև տվյալ գործարքի համար անհրաժեշտ գումարի մեծությունը, որն էլ արտացոլվում է վերջինիս՝ Համակարգում դրամական միջոցների արտացոլման համար բացված հայելային հաշվին:

7.3.5. Վերջնահաշվարկի օրվա մինչև 15:40-ը այն պահի դրությամբ, երբ Համակարգում համընկնում են արժեթղթերի փոխանցող և ստացող կողմերի Հաշվի Օպերատորների հանձնարարականները և սույն գլխի 7.3.4 կետով սահմանված կարգով Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվին առկա է հանձնարարականում նշված վճարման ենթակա գումարի չափով դրամական միջոց, ապա արժեթղթերի փոխանցումը գրանցվում է համակարգում, տեղի է ունենում վերջնահաշվարկ, որի արդյունքում Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվից վճարման ենթակա գումարը փոխանցվում է վաճառող կողմի Հաշվի Օպերատորի իրավասու հաշվին:

7.4. Ազատ առաքում համաձայնությամբ կամ FOP փոխանցում.

7.4.1. «Ազատ առաքում համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցումը տեղի է ունենում նույն ընթացակարգով, ինչ «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման դեպքում՝ առանց դրամական միջոցի առկայության պահանջի:

7.5. Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում.

7.5.1. Արժեթղթերի պորտֆելի փոխանցմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում գրանցվում է.

ա) Հաշվետիրոջ Պորտֆելի փոխանցման հանձնարարականի [eFO 75-40-06](#) հիման վրա, երբ Հաշվետերն իր արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերն ամբողջ մնացորդով Բանկի սպասարկման տակ գտնվող արժեթղթերի հաշվից փոխանցում է այլ Հաշվի Օպերատորի մոտ բացված իր արժեթղթերի մեկ այլ հաշվին,

բ) սույն ընթացակարգով և Դեպոզիտարիայի կանոններով նախատեսված այլ դեպքերում:


7.5.2. Բանկի կողմից արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարականը ենթակա է կատարման վերջինիս կողմից ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

7.6. ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկի հետ կնքված ռեպո պայմանագրից բխող արժեթղթերի փոխանցում.

7.6.1. «Ռեպո, հակադարձ ռեպո և ռեպո պայմանագրի խզում» գործարքներից բխող արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների գրանցումները և ժամկետները Համակարգում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով: Ռեպո, հակադարձ ռեպո գործարքներից բխող ռեպո զամբյուղից արժեթղթերի փոխանցման հետևանքի հետ կապված գործառնությունների իրականացման կարգը և հերթականությունը սահմանվում է Կանոններով:

ԳԼՈՒԽ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Բանկն արժեթղթերի գրավադրման գործառնություն կարող է գրանցել միայն գրավատու կողմ հանդիսացող անձի արժեթղթերի ակտիվ կարգավիճակով հաշվի առկայության դեպքում: Համակարգում գրավադրված արժեթղթերով կորպորատիվ գործողությունների իրականացման դեպքում գրավի իրավունքը պահպանվում է կորպորատիվ գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ: Այն դեպքում, երբ կորպորատիվ գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ ծրագրային համակարգում գրավի իրավունքն ինքնաշխատ չի գրանցվում, Հաշվի օպերատորը պարտավոր է անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր տեղեկացնել այդ մասին: Տեղեկացումը ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան անմիջապես ապահովում է կորպորատիվ

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 15/28</i>

գործողության արդյունքում գրանցված արժեթղթերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

8.2. Բանկը Համակարգում գրավառուի համար բացում է գրավառուի հաշիվ, որտեղ արտացոլվում են գրավառուի օգտին հաշվառված արժեթղթերը, եթե գրավառուն Համակարգում չունի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ կամ չի ցանկանում սեփականատիրոջ արժեթղթերի նոր հաշիվ բացել Բանկի միջնորդությամբ:

8.3. Արժեթղթերի գրավադրման գործառնությունը գրանցելու համար գրավատուն պարտավոր է Բանկ ներկայացնել Արժեթղթերի գրավադրման հանձնարարական [eFO 75-40-07](#), ինչպես նաև Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող արժեթղթերի օտարման/գրավադրման մասին համաձայնություն՝ [eFO 72-00-227](#) կամ Արժեթղթերի նկատմամբ իրավունքների մասին հայտարարություն՝ [eFO 72-00-228](#):

8.4. Պատասխանատու աշխատակցի պահանջով Արժեթղթերի գրավադրման հանձնարարականի [eFO 75-40-07](#) հետ միասին Բանկ պետք է ներկայացվի Գրավի պայմանագիրը:

8.5. Անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերերը պետք է ներկայացնեն նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրանց կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

8.6. Արժեթղթերի հաջորդող գրավով պայմանավորված գործառնությունը Համակարգում գրանցվում է, եթե այն արգելված չէ Համակարգում գրանցված նախորդ գրավի պայմանագրերով կամ գրավադրվող արժեթղթերի թողարկման պայմաններով:

8.7. Գրավատուի կողմից ներկայացված Արժեթղթերի գրավադրման հանձնարարականը [eFO 75-40-07](#) Բանկի կողմից ենթակա է կատարման վերջին(ներ)իս կողմից այն ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Արժեթղթերի գրավառուի փոփոխության, ինչպես նաև գրավի իրավունքի գրավադրման դեպքում գրավի իրավունքի գրանցումը նոր գրավառուի օգտին կատարվում է Համակարգում տվյալ պահին գրանցված գրավառուի հանձնարարականի (կամ վերջինիս համաձայնության դեպքում՝ գրավատուի հանձնարարականի) հիման վրա՝ դրա ստացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 9. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

9.1. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայության մատուցման դեպքում գրավառուն Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը (եթե գրավատու կողմի հաշիվը սպասարկվում է Բանկի կողմից).


ա) արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման պայման նախատեսող պայմանագիր/համաձայնագիր,

բ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավատուին կատարված ծանուցումը և ապացույց գրավատուի կողմից դրա ստացման վերաբերյալ, որոնք կարող են Բանկ ներկայացվել ինչպես Բանկ դիմելիս, այնպես էլ գրավի առարկայի իրացման ժամանակ,

գ) սույն ընթացակարգով սահմանված արժեթղթերի փոխանցման հանձնարարական,

դ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում),

ե) անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերերը պետք է ներկայացնեն նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրանց կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

	ՈՐԱՎԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 16/28</i>

9.2. Բանկը 5 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգելով ներկայացված փաստաթղթերը և համոզվելով, որ դրանցում պահպանվել են սույն կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Համակարգում գրանցում է համապատասխան հանձնարարականը: Հակառակ դեպքում հանձնարարականի կատարումը մերժվում է:

ԳԼՈՒԽ 10. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10.1. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.

- ա) գրավի իրավունքի դադարեցման ամսաթվի դրությամբ, որի մասին տեղեկությունը Համակարգ մուտք էր արվել գրավի իրավունքի գրանցման գործառնության ժամանակ,
- բ) գրավառուի կողմից գրավադրման դադարեցման հանձնարարականի ներկայացման դեպքում,
- գ) գրավի իրավունքի դադարեցման վերաբերյալ գրավատուի կողմից հանձնարարականի և գրավառուի համաձայնությունը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում,
- դ) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի համապատասխան որոշման հիման վրա,
- ե) Կենտրոնական դեպոզիտարիայի Կանոններով սահմանված այլ դեպքերում:

10.2. Արժեթղթերի գրավի իրավունքի դադարեցման հանձնարարականը [eFO 75-40-08](#) Բանկի կողմից ենթակա է կատարման դրա ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԱՍ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

11.1. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցումը Հաշվետիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցիչի կողմից իրականացվում է, որպես իր սեփականատիրոջ արժեթղթերի հաշվով կամ արժեթղթերի հաշվում առկա որևէ արժեթղթով(երով) գործառնությունների իրականացման արգելք: Սառեցման գործառնությունը գրանցելու համար Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկ են ներկայացնում Արժեթղթերի հաշվի սառեցման հանձնարարականը [eFO 75-40-09](#):


11.2. Արժեթղթերի սառեցման դադարեցումը կատարվում է Հաշվետիրոջ Արժեթղթերի հաշվի սառեցման դադարեցման հանձնարարականի [eFO 75-40-10](#) հիման վրա կամ, եթե լրացել է սառեցման համար սահմանված ժամկետը:

11.3. Անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերերը պետք է ներկայացնեն նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրանց կողմից ներկայացված տվյալների հավաստիության մեջ:

11.4. Արժեթղթերի սառեցման և դրա դադարեցման հանձնարարականը Բանկի կողմից ենթակա է կատարման վերջինիս կողմից այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 12. ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄԸ ԳՐԱՎԱԴԻՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՐ

12.1. Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման նպատակով Հաշվետերը Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման հանձնարարական [eFO 75-40-11](#) է ներկայացնում Բանկ՝ նշելով ԱՄՏԾ կամ ԱՆԾ-ն և արժեթղթերի քանակ, որոնց նկատմամբ պետք է կիրառվի ծայնի իրավունքի սահմանափակումը: Միաժամանակ գրավառու կողմ հանդիսացող հաճախորդն իր Հաշվի Օպերատորին է ներկայացնում քվեարկելու իրավունքի սահմանափակման համաձայնություն, եթե արժեթղթերն արդեն իսկ ծանրաբեռնված են գրավադրման հիմքով:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 17/28</i>

12.2. Այն դեպքում, երբ գրավատու և գրավառու կողմերը քվեարկելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ համաձայնության են եկել արժեթղթերի գրավադրման գործառնությունը Համակարգում գրանցելու պահին, ապա քվեարկելու իրավունքի սահմանափակման գրառումը Համակարգում իրակա-նացվում է՝ գրավադրման գործառնությունը գրանցելիս:

12.3. Քվեարկելու իրավունքի սահմանափակումը համարվում է դադարեցված արժեթղթերի գրա-վադրման դադարեցման գրանցմամբ կամ, եթե նախապես նշվել է ժամկետ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման իրականացման համար: Այն դեպքում, երբ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման վերաբերյալ հանձնարարականը գրավատուի կողմից տրվել է ավելի վաղ, քան դրա գրավադրումը, ապա համակարգում գրանցվում է միայն գրավառուի գրավոր համա-ձայնության առկայության դեպքում:

12.4. Անհրաժեշտության դեպքում Պատասխանատու աշխատակցի պահանջով Հաշվետերերը պետք է ներկայացնեն նաև այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան համոզվել նրանց կողմից ներկա-յացված տվյալների հավաստիության մեջ:

ԳՐՈՒԽ 13. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցման գրանցումը Համակարգում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից գրանցվում է դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի արժեթղթերի հաշվի կամ արժեթղթերի հաշվին առկա որևէ արժեթղթի(երի) սառեցման վերաբերյալ որոշման հիման վրա հետևյալ դեպքերում.

ա) Թողարկողին սնանկ ճանաչման դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սառեցվում են տվյալ թողարկողի թողարկած արժեթղթերը,

բ) երբ արժեթղթերի հաշիվը, որը ենթակա է սառեցման ունի ժամանակավոր հաշվի կարգա-վիճակ:

13.2. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցման դադարեցումը Կենտրոնական դեպոզի-տարիայի կողմից գրանցվում է դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի արժեթղթերի հաշվի կամ արժեթղթերի հաշվին առկա որևէ արժեթղթի(երի) սառեցման դադարեցման վերաբերյալ որոշման հիման վրա հետևյալ դեպքերում.

ա) Թողարկողի առողջացման դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից դադարեց-վում են տվյալ թողարկողի թողարկած արժեթղթերը հաշվետերերի արժեթղթերի հաշիվներին առկա սառեցման վերաբերյալ գրառումները,


բ) երբ արժեթղթերի հաշիվը, որում պետք է իրականացվի սառեցման դադարեցման գրառումն ունի ժամանակավոր հաշվի կարգավիճակ:

13.3. Դատարանի վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցումը համակարգում գրանցվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հետևյալ դեպքերում.

ա) երբ տվյալ վճռով պարտապանը հանդես է գալիս Կենտրոնական դեպոզիտարիան,

բ) երբ արժեթղթերը փոխանցող կողմի արժեթղթերի հաշիվն ունի ժամանակավոր հաշվի կարգավիճակ:

13.4. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի վերահասցեագրել իր կողմից ստացված արժեթղթերի փոխանցման գործառնության իրականացմանն ուղղված վճիռը կամ որոշումը այն Հաշվի Օպերատորին, ում մոտ վարվում է արժեթղթերի փոխանցման կողմ հանդիսացող հաշվետիրոջ արժե-թղթերի հաշիվը համապատասխան վճիռը կամ որոշումը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 18/28</i>

13.5. Սույն գլխով սահմանված գործառնությունների գրանցումը Համակարգում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվում է գործառնության համար հիմք հանդիսացող փաստաթղթի կամ հանձնարարականի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 14. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ

14.1. Սույն ընթացակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնարարականները Թողարկողների և Հաշվետերերի կողմից կարող են ներկայացվել Բանկ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09:30-16:00-ն: Բանկը Թողարկողներից և Հաշվետերերից ստացված հարցումների պատասխանները վերջիններիս կարող է տրամադրել հարցման մեջ նշված օրվա դրությամբ՝ հաշվի առնելով և տեղեկացնելով Թողարկողին և հաշվետիրոջը այն մասին, որ հարցման ներկայացման օրվա դրությամբ ժամը 10:30-ից մինչև ժամը 15:40-ը առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերը կգտնվեն արժեթղթերի տեխնիկական հաշվին և չեն արտացոլվի Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

ԳԼՈՒԽ 15. ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15.1. Հաշվետերերին տրամադրվող տեղեկատվությունը.

15.1.1. Հաշվետերն իրավունք ունի Համակարգից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում տրված գրավոր հարցմանը համապատասխան ծավալով բացառությամբ Հաշվետիրոջն արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ տեղեկացմանը, որը Հաշվետիրոջն է ներկայացվում արժեթղթերի հաշվի բացման արդյունքում Բանկի կողմից:

15.1.2. Հաշվետերն իրավունք ունի Արժեթղթերի պահառության պայմանագրով [eFO 72-00-650](#) հրաժարվել իր Արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ ծանուցման [eFO 75-40-12](#) ստացման իրավունքից:

15.1.3. Արժեթղթերի հաշվի բացման վերաբերյալ տեղեկացումը Հաշվետիրոջն է ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային եղանակով, որի ձևը սահմանվում է Հաշվետիրոջ կողմից Բանկին ներկայացված պայմանագրի կնքման հանձնարարականում: Տեղեկացումը պարունակում է տեղեկություններ արժեթղթերի հաշվի համարի, Բանկի վերաբերյալ (Բանկի անվանումը, գործունեության հասցեն, հեռախոսահամար, ինտերնետային կայքը) և Ծանուցմամբ [eFO 75-40-12](#) սահմանված այլ տեղեկություններ:

15.1.4. Հաշվետերն իրավունք ունի Համակարգից ստանալ հետևյալ տեղեկությունները.

ա) Քաղվածք արժեթղթերի հաշվից [eFO 75-40-13](#), որը ներառում է տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա միայն մեկ դասի կամ տեսակի արժեթղթի մասով,


բ) Հաշվետվություն իր արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ [eFO 75-40-14](#), որը ներառում է տեղեկություններ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի մնացորդի վերաբերյալ,

գ) Հաշվետվություն արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ [eFO 75-40-15](#):

15.1.5. Սույն ընթացակարգի 15.1.4 ենթակետով սահմանված տեղեկությունները Բանկը Հաշվետիրոջն է տրամադրում համապատասխան գրավոր Տեղեկությունների ստացման դիմումի [eFO 75-40-16](#) ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

15.1.6. Սույն գլխով սահմանված գործառնությունների մասին հաշվետվությունը կամ տեղեկանքը տրվում է այն ժամանակահատվածի համար, որը նշված է Հաշվետիրոջ գրավոր Դիմումի [eFO 75-40-16](#) մեջ և որը չի գերազանցում և ներառում է գործառնությունների առարկա հանդիսացող արժեթղթերի վերաբերյալ Համակարգում տեղեկությունների առկայության ժամանակահատվածը:

15.1.7. Բանկը սույն գլխով սահմանված տեղեկությունները տրամադրում է միայն Հաշվետիրոջ լիազորված ներկայացուցիչներին, որոնց լիազորությունների գործողության մեջ լինելու փաստի մասին

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 19/28</i>

առկա են համապատասխան տեղեկություններ Համակարգում կամ ներկայացված այլ փաստաթղթերում:

15.1.8. Բանկը Հաշվետիրոջը տարեկան մեկ անգամ անվճար, ոչ ուշ, քան մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը էլեկտրոնային եղանակով տրամադրում է իր արժեթղթերի հաշվի մնացորդի, ինչպես նաև իր արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն, եթե հաշվետերը նման տեղեկության ստացման գրավոր պահանջ է ներկայացրել, և տրամադրել է համապատասխան էլեկտրոնային փոստի հասցե:

15.1.9. Սույն գլխով սահմանված տեղեկությունները վավերացվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալներից որևէ մեկի ստորագրությամբ, և կնիքվում Բանկի կնիքով:

15.1.10. Եթե սույն գլխում թվարկված յուրաքանչյուր տեղեկատվություն տրամադրվում է թղթային տարբերակով, ապա Հաշվետերը կամ նրա լիազորված ներկայացուցիչը կատարում է տրամադրման վերաբերյալ նշում և ստորագրում (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքում) տվյալ տեղեկության բնօրինակի պատճենի վրա:

15.2. Նոտարին տրամադրվող տեղեկատվությունը.

15.2.1. Նոտարն օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի Համակարգից տեղեկություններ ստանալ իր իրավասության շրջանակներում տրված հարցմանը համապատասխան ծավալով:

15.2.2. Նոտարական հարցումն ուղղակիորեն հասցեագրվում է Կենտրոնական դեպոզիտարիային, եթե նախապես այն չի հասցեագրվել Բանկին (հարցմանն առնչվող արժեթղթերի հաշվի սպասարկումը Բանկի կողմից իրականացվելու դեպքում):

15.2.3. Կենտրոնական դեպոզիտարիան հարցման ստացման արդյունքում Համակարգում ստուգում է հարցմամբ պահանջվող տեղեկությունը, և եթե պարզվում է, որը հարցումը վերաբերվում է ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվին, ապա 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է նոտարական հարցման պատասխանը:

15.2.4. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան պարզում է, որ հարցումը վերաբերվում է ակտիվ հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվին, ապա կարող է նոտարական հարցումը այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում վերահասցեագրել Բանկին:

15.2.5. Բանկը նոտարական հարցման ստացման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է նոտարական հարցման պատասխանը:

15.3. Պետական մարմիններին տրամադրվող տեղեկատվությունը


15.3.1. ՀՀ կենտրոնական բանկը և պետական մարմինները Համակարգից տեղեկություններ ստանալու իրավունք ունեն միայն իրենց իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.3.2. ԴԱՀԿ ծառայությունից, ՀՀ կենտրոնական բանկից և պետական մարմիններից ստացված հարցումներին պատասխանում է Կենտրոնական դեպոզիտարիան՝ իր կանոններով սահմանված կարգով, եթե տվյալ հարցումը չի ուղղվել Բանկին և/կամ Բանկը իրավասու է պատասխանել տվյալ հարցմանը:

ԳԼՈՒԽ 16. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ

16.1. Համակարգի միջոցով պետական պարտատոմսերի պահառության իրականացման ընդհանուր սկզբունքները.

16.1.1. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող պետական պարտատոմսերի պահառության (ենթապահառության) գործառնությունները կարգավորվում է ՀՀ օրենքներով, դրանց հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության նորմատիվ

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 20/28</i>

իրավական ակտերով, ՀՀ կենտրոնական բանկի հետ Կենտրոնական դեպոզիտարիայի կնքած պայմանագրով, կանոններով և Կենտրոնական դեպոզիտարիայի այլ իրավական ակտերով:

16.1.2. Պետական պարտատոմսերի պահառության ծառայությունների մատուցումը (այդ թվում Հաշվետիրոջ Դեպո հաշիվների բացումը) կատարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքված պահառության պայմանագրի հիման վրա:

16.1.3. Պետական պարտատոմսերի պահառության (ենթապահառության) ծառայությունների մատուցման (այդ թվում Դեպո հաշվի բացման) համար նախապայման է հանդիսանում Հաշվետիրոջ (բացառությամբ օտարերկրյա անվանատերերի) ընթացիկ հաշվի առկայությունը Բանկում:

16.1.4. Բանկը Հաշվետիրոջ պետական պարտատոմսերով գործառնություններ կարող է իրականացնել միայն պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրերով սահմանված գրավոր, այդ թվում նաև էլեկտրոնային կարգադրությունների հիման վրա: Որպես կարգադրություն կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը.

ա) Պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կամ նրա լիազորած անձի կողմից՝ սահմանված ձևով լրացված և ներկայացված Դեպո հանձնարարականները, ինչպես նաև պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում այդ իրավունքները հավաստող այլ փաստաթղթերը:

բ) Դատական վճռի հիման վրա Արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակման, փոխանցման, դադարեցման գործառնությունների կատարման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական ակտերը և/կամ ԴԱՀԿ որոշումները:

16.1.5. Բանկի կողմից ՀՀ ԿԲ Bank Mail համակարգով ուղարկվող և ստացվող հանձնարարականների վերաբերյալ հաղորդագրությունների, Հաճախորդներին տեղեկատվության տրամադրման կարգը, գործառնությունների իրականացման ժամերը, Հաճախորդներին հաշվետվությունների տրամադրման, դեպո հանձնարարականների ընդունման, կատարման և մերժման կարգերը սահմանվում են Կանոններով:

16.2. Պետական պարտատոմսերի մարման սպասարկումը, զեղչատոկոսի, տոկոսային, արժեկտրոնային եկամտի վճարումը.


16.2.1. Պետական պարտատոմսերի մարման սպասարկումը, զեղչատոկոսի, տոկոսային, արժեկտրոնային եկամտի վճարումը իրականացվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կարգերի և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների:

16.3. Պետական պարտատոմսերով երկրորդային շուկայում գործառնությունների կատարումը.

16.3.1. Երկրորդային շուկայում պետական պարտատոմսերով իրականացվում են առքուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պետական պարտատոմսերի փոխանակում և ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ գործարքներ: Այդ գործարքների գործընթացների կազմակերպման և իրականացման ժամանակ Բանկն առաջնորդվում է Կանոններով:

16.4. Պետական պարտատոմսերի գրավադրումը. Պետական պարտատոմսերի գրավադրման ժամանակ Բանկի կողմից հանձնարարականների ընդունման, ծրագրային համակարգ մուտքագրման, Դեպո հանձնարարականների ձևավորման և, անհրաժեշտության դեպքում, ՀՀ ԿԲ ներկայացման ողջ գործընթացն իրականացվում է Կանոններով սահմանված կարգով:

16.5. Պետական պարտատոմսերի գրավից հանումը (ազատումը). Պետական պարտատոմսերի գրավից հանման ողջ գործընթացը՝ հանձնարարականներ տալու իրավասու անձանց ցանկը, նրանց

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>Էջ 21/28</i>

իրավասությունների շրջանակը, հանձնարարականների ձևավորման և ծրագրային համակարգ մուտքագրելը, դրամական միջոցների շարժը (առկայության դեպքում) իրականացվում է Կանոններով սահմանված կարգով:

16.6. Պետական պարտատոմսերի գրավի առարկայից հրաժարվելը.

16.6.1. Գրավի առարկայից հրաժարման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ գրավառուի հանդեպ հիմնական պարտավորության չկատարման պարագայում, առանց դատարան դիմելու, գրավատուն հրաժարվում է գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերից (կամ դրանց մի մասից)՝ հանձնելով դրանք ի սեփականություն գրավառուին: Գրավի առարկայից հրաժարման ողջ գործընթացն իրականացվում է Կանոններով սահմանված կարգով և հերթակա- նությամբ:

16.7. Պետական պարտատոմսերի գրավի առարկայի փոխարինումը.

16.7.1. Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարինման գործառնու- թյունն իրականացվում է այն դեպքում, երբ գրավի պայմանագրով գրավադրվել են պետական պարտատոմսեր, որոնց մարման (մասնակի մարման) ժամկետը նախորդում է գրավի պայմանագրում սահմանված հիմնական պարտավորության կատարման ժամկետին, կամ գրավի պայմանագրով սահմանված այլ դեպքերում: Գրավի առարկա հանդիսացող պետական պարտատոմսերի փոխարին- ման ողջ գործընթացն իրականացվում է Կանոններով սահմանված կարգով և հերթականությամբ:

16.8. Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինումը.

16.8.1. Գրավատուի փոխարինումը գործառնություն է, որի արդյունքում գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (նոր գրավատուի)՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավառուի գրավի իրավուն- քը: Գրավատուի փոխարինման գործառնությունը կատարվում է այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրու- թյամբ սահմանված կարգով գրավադրված պետական պարտատոմսերի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի: Գրավատուի փոխարինման դեպքում գրա- վադրված պետական պարտատոմսերը գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվից փոխանցվում են նոր գրավատուի գրավադրված պետական պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ միևնույն գրավառուի անունով գրավի իրավունքի համապատասխան վերագրանցմամբ: Պետական պարտատոմսերի գրավատուի փոխարինման ողջ գործընթացն իրա- կանացվում է Կանոններով սահմանված կարգով և հերթականությամբ:

16.9. Պետական պարտատոմսերի գրավառուի փոխարինումը.


16.9.1. Գրավառուի փոխարինումը գործառնություն է, որի արդյունքում գրավառուի գրավի իրա- վունքը փոխանցվում է այլ անձի՝ պահպանելով գրավադրված պետական պարտատոմսերի նկատ- մամբ գրավատուի սեփականության իրավունքը: Պետական պարտատոմսերի գրավառուի փոխա- րինման ողջ գործընթացն իրականացվում է Կանոններով սահմանված կարգով և հերթականությամբ:

16.10. Գրավադրված Պետական պարտատոմսերի մարումը և դրանց դիմաց տոկոսների վճարումը.

16.10.1. Գրավադրված Պետական պարտատոմսերի մարումը և դրանց դիմաց տոկոսների վճա- րումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կարգերի և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին համապատասխան:

16.11. Պետական պարտատոմսերով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածք- ների, հաշվետվությունների տրամադրումը.

16.11.1. Պետական պարտատոմսերով գործառնություն կատարելիս հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին Բանկի կողմից տրամադրվում է հաշվետվություն՝ ներկայացված Դեպո

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 22/28</i>

հանձնարարականների կատարման վերաբերյալ, այդ հանձնարարականը կատարելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

16.11.2. Սույն ընթացակարգով սահմանված դեպքերում Համակարգից քաղվածքների, հաշվետվությունների և տեղեկանքների տրամադրումը կատարվում է Կենտրոնական դեպոզիտարիայի Կանոններով սահմանված ընդհանուր կարգով:

16.11.3. Դեպո հաշվում յուրաքանչյուր շաբաթի դեպքում շաբաթից հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում Բանկը հաճախորդին տրամադրում է վերջինիս պատականող պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքներ:

16.11.4. Հաճախորդ-գրավառու ունենալու դեպքում Բանկը գրավառուի օգտին պետական պարտատոմսերի գրավադրումից հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում հաճախորդին տրամադրում է վերջինիս օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք:

16.11.5. Արժեթղթերի հաշվից քաղվածքները, պետական պարտատոմսերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները, հաճախորդին պատկանող պետական պարտատոմսերի և հաճախորդ-գրավառուի օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքները տրամադրվում են թղթային, էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով: Նշված բոլոր փաստաթղթերի պատճենները պահվում են Բանկի մոտ և էլեկտրոնային եղանակով գրանցվում ուղարկված քաղվածքների և հաշվետվությունների մատյանում:


ՓԼՈՒԽ 17. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ

17.1. Օտարերկրյա արժեթղթերի սեփականատերերի կողմից իրենց իրավունքների իրականացման նպատակով Բանկն իրականացնում է իր և հաճախորդի միջև կնքված պահառության պայմանագրով, դրա ենթապահառության համաձայնագրով [eFO 72-00-655](#) և իր ընթացակարգերով սահմանված բոլոր գործողությունները:

17.2. Հաշվետերն իր արժեթղթերի հաշվում հաշվառվող կամ հաշվառման ենթակա արժեթղթերով սույն ընթացակարգով նախատեսված գործառնությունների իրականացման նպատակով Բանկ է ներկայացնում Բանկի կանոններով սահմանված հանձնարարականները, որոնք Բանկը փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիա Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով: Այն պարագայում, երբ հանձնարարականի փոխանցումը հնարավոր չէ իրականացնել Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով, ապա հանձնարարականը Բանկը դեպոզիտարիային ներկայացնում է թղթային եղանակով: Հաշվետերը Բանկ է ներկայացնում նշված հանձնարարականով նախատեսված գործառնության համար Կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի հետ պայմանագիր կնքած Օտարերկրյա պահառուի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

17.3. Բանկի Համակարգում իրականացված գրառման հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան անհրաժեշտության դեպքում ձևավորում է Օտարերկրյա պահառուի կանոններով սահմանված հանձնարարականներ և սահմանված ժամկետներում ներկայացնում կատարման:

17.4. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի կողմից տեղեկատվության ներկայացումից հետո (եթե դա նախատեսված է Օտարերկրյա պահառուի կանոններով և/կամ Օտարերկրյա պահառուի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով), Կենտրոնական դեպոզիտարիան հանձնարարականի կատարման վերաբերյալ գրառում է կատարում Համակարգում կամ այլ եղանակով տեղեկացնում Բանկին: Բանկը պարտավոր է գործառնության կատարման վերաբերյալ առավելագույնը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Հաշվետիրոջը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 23/28</i>

17.5. Հաշվետերն իր հաշվում առկա օտարերկրյա արժեթղթերի մնացորդի, ինչպես նաև արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով դիմում է Բանկին: Բանկը Հաշվետիրոջ դիմումի հիման վրա վերջինիս տրամադրում է Կանոններով սահմանված հաշվետվությունները (քաղվածք, տեղեկանք): Նշված հաշվետվությունները Բանկը ստանում է Համակարգում համապատասխան հարցում կատարելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում Բանկը տեղեկատվության ստացման նպատակով գրավոր դիմում է ներկայացնում Կենտրոնական դեպոզիտարիա, որին Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանում է Կանոններով սահմանված կարգով: Այն դեպքում, երբ Բանկի կողմից տեղեկատվության տրամադրումն իրականացվում է կապի այնպիսի եղանակներով, ինչպիսիք են ֆաքսիմիլային կապը, էլեկտրոնային փոստը և այլն, ապա այդ տեղեկություններին երրորդ անձանց հնարավոր հասանելիության համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

17.6. Հաշվետերը կարող է Բանկ ներկայացնել օտարերկրյա արժեթղթերով գործառնությունների դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման հանձնարարականներ, որոնց ներկայացման և կատարման առանձնահատկությունները սահմանվում են Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքված ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով:

17.7. Կանոններով նախատեսված այն դեպքերում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ենթապահառության ծառայությունները մատուցվում են անմիջականորեն, սույն գլխով նախատեսված հանձնարարականները Բանկը ներկայացնում է անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիա՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվետիրոջ միջև ուղղակիորեն (առանց Բանկի միջնորդության) կնքված պայմանագրով սահմանված կարգով:

17.8. Հաշվետիրոջ կողմից ներկայացված հանձնարարականի ընդունումը Բանկի կողմից կատարվում է գործառնական օրվա ընթացքում (յուրաքանչյուր աշխատանքային օրվա 09:30-17:00), եթե Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքված ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով այլ ժամկետ սահմանված չէ: Գործառնական օրվա ավարտին ընդունված հանձնարարականն ընդունված է համարվում հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Օտարերկրյա արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակով տրվող հանձնարարականների ընդունման ժամկետները համապատասխանեցվում են Օտարերկրյա պահառուների հետ կնքված պայմանագրերով նախատեսված ժամկետների հետ:

ԳԼՈՒԽ 18. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

18.1. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում.

18.1.1. Արժեթղթերի առևտրային արգելադրման իրականացման համար Բանկը Ծրագրային համակարգի համապատասխան բաժին է մուտքագրում հետևյալ տեղեկությունները.


ա) արժեթղթերի հաշվի համարը,

բ) արգելադրվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը,

գ) արժեթղթերի արգելադրման ենթակա քանակը,

դ) արգելադրվող արժեթղթերի արժույթի հաշվեգրման համար նախատեսված իրավասու դրամական հաշվի համարը:

18.1.2. Բանկն արժեթղթերի դեպոնացման նպատակով առևտրային արգելադրման տվյալները Ծրագրային համակարգ է մուտքագրում առևտրային օրվա ժամը 10:30-14:45-ը: Առևտրային օրվա ժամը 14:45-ից հետո ծրագրային համակարգ մուտքագրված արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականում ներառված տեղեկությունները կարգավորվող շուկա են մտնում հաջորդ առևտրային օրը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 24/28</i>

18.1.3. Արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականի ձևավորման համար Բանկի կողմից Ծրագրային համակարգ մուտքագրված տվյալները Ծրագրային համակարգն ավտոմատ կերպով համեմատում է Ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում առևտրային արգելադրման հանձնարարական չի ձևավորվում: Համեմատությունը կատարվում է ըստ հանձնարարականների ձևավորման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը համապատասխան հաղորդագրության միջոցով տեղեկացնում է Բանկին հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ:

18.1.4. Արժեթղթերի առևտրային արգելադրումը դադարեցվում է.

- ա) Բանկի կողմից Ծրագրային համակարգ մուտքագրված արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականի հիման վրա,
- բ) Կարգավորվող շուկայում առևտրի ընթացքում Բանկի կողմից արգելադրված արժեթղթերի ապադեպոնացման արդյունքում,
- գ) «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» կանոններով սահմանված այլ դեպքերում:

18.1.5. Ծրագրային համակարգում առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարականի կազմման համար Բանկն ընտրում է արգելադրումը դադարեցվող արժեթղթերի առևտրային արգելադրման համապատասխան հանձնարարականը.

- մուտքագրում է արժեթղթերի այն քանակը, որը պետք է մնա առևտրային արգելադրման կարգավիճակով՝ ոչ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում,
- իրականացնում է տվյալ հանձնարարականի չեղարկում՝ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում:

18.2. Դրամական միջոցների փոխանցումը դեպոնացման նպատակով.

18.2.1. Կարգավորվող շուկայում գործարքների կնքման համար դրամական միջոցների դեպոնացման նպատակով մինչև առևտրային օրվա ժամը 14:45-ը Բանկն անմիջականորեն իր իրավասու դրամական հաշիվներից Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվին է փոխանցում (դեպոնացնում) Կարգավորվող շուկայում արժեթղթերի առևտրի համար նախատեսված դրամական միջոցները:


18.2.2. Դրամական միջոցների փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվին իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված համապատասխան հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում թղթային եղանակով:

18.2.3. Բանկը դրամական միջոցների դեպոնացման նպատակով մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 14:45-ը համակարգում գրառված իր համապատասխան դրամական ազատ միջոցների սահմաններում կարող է ծրագրային համակարգ մուտքագրել դրամական միջոցների դեպոնացման հանձնարարական, որը պետք է ներառի հետևյալ տվյալները.

- ա) Բանկի համապատասխան իրավասու դրամական հաշվի համարը,
- բ) դրամական միջոցի արժույթը,
- գ) դրամական միջոցների գումարը,
- դ) արժեթղթերի հաշվի համարը:

18.2.4. Բանկը դրամական միջոցների դեպոնացման համապատասխան հանձնարարականում հայտնաբերված անհամապատասխանությունները կարող է ուղղել ոչ ուշ, քան առևտրային օրվա ժամը 14:45-ը:

18.3. Արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացում.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ</i> 19/11/19	<i>Խմբագրություն</i> 9	<i>Էջ</i> 25/28

18.3.1. Կարգավորվող շուկայում արժեթղթերի և դրամական միջոցների ապադեպոնացումը կատարվում է Կարգավորվող շուկայի օպերատորի կանոնների համաձայն:

18.4. Քլիրինգ և վերջնահաշվարկ.

18.4.1. Առևտրային նստաշրջանի ավարտից հետո Կենտրոնական դեպոզիտարիան իրականացնում է նախնական ստուգում, որից հետո առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների զուտացում:

18.4.2. Կենտրոնական դեպոզիտարիան Բանկի և/կամ նրա հաճախորդի արժեթղթերով զուտ պահանջը և/կամ պարտավորությունները որոշելուց հետո հաշվարկում է Բանկի սեփական և ամփոփ հաճախորդների իրավասու դրամական հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամական միջոցները, պատրաստում է դրամական վերջնահաշվարկների իրականացման համար համապատասխան հանձնարարականները:

18.4.3. Բանկը ստուգում է վերջնահաշվարկի արդյունքում իր իրավասու դրամական հաշիվների վրա փոխանցված դրամական միջոցների համապատասխանությունը Կարգավորվող շուկայի օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականների, ինչպես նաև Ծրագրային համակարգում առկա տեղեկությունների հետ:

18.4.4. Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Բանկը մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16:30-ը այդ մասին հեռախոսով հայտնում է ՀՀ կենտրոնական բանկին և Կենտրոնական դեպոզիտարիային: Հնարավորության դեպքում ՀՀ կենտրոնական բանկին տեղեկացումն ուղարկվում է նաև էլեկտրոնային եղանակով՝ ՍԻ-ԲԻ-Էյ-նեթ համակարգչային ցանցով:


18.4.5. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանության վերաբերյալ կատարված ահազանգն անհիմն է, ապա Կենտրոնական դեպոզիտարիան մինչև ժամը 17:00-ն այդ մասին հեռախոսով և ՍԻ-ԲԻ-Էյ-նեթ համակարգչային ցանցով տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին:

18.4.6. Եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգը հիմնավոր է, ապա Կենտրոնական դեպոզիտարիան մինչև ժամը 17:00-ն հեռախոսով և ՍԻ-ԲԻ-Էյ-նեթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով այդ մասին տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դիմելով հետաձգել վերջինիս գործառնական օրվա փակումը: Բանկը Կենտրոնական դեպոզիտարիայից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍԻ-ԲԻ-Էյ-նեթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ, քան մինչև ժամը 18:00-ն պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիայի առևտրային հաշվին հետ փոխանցել ավել ստացված միջոցները:

18.4.7. Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ Բանկի հաշվին պակաս միջոցներ են փոխանցվել, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ոչ ուշ, քան տվյալ առևտրային օրվա ժամը 18:30-ը, պարտավոր է համապատասխան հանձնարարականներ ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ՝ ստացված միջոցները Բանկի իրավասու դրամական հաշվին փոխանցելու նպատակով:

ԳԼՈՒԽ 19. ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻՆ (ԿՇՀՀԱ) ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

19.1. Կարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով Հաշվետերը (լիազորված ներկայացուցիչը) կարող է Բանկ ներկայացնել Արժեթղթերի հաշվի հասանելիության տրամադրման հանձնարարական [eFO 75-40-17](#), որի համաձայն Բանկը ԿՇՀՀԱ հանդիսացող Համակարգի անդամին տրամադրում է հաճախորդի արժեթղթերի հաշվի հասանելիություն:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ</i> 19/11/19	<i>Խմբագրություն</i> 9	<i>Էջ</i> 26/28

19.2. Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվի նկատմամբ ԿԾՀՀԱ հանդիսացող Համակարգի անդամի հասանելիությունը կարող է փակվել Հաշվետիրոջ (լիազորված ներկայացուցչի) կողմից Արժեթղթերի հաշվի հասանելիության փակման հանձնարարական [eFO 75-40-18](#):

19.3. Սույն գլխով սահմանված հանձնարարականները Բանկի կողմից ընդունվում են Հաշվետիրոջը կամ լիազորված ներկայացուցչին սույն ընթացակարգով սահմանված կերպով նույնականացնելու դեպքում:

ԳԼՈՒԽ 20. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

20.1. Սույն ընթացակարգում ներկայացված ծառայությունների համար վճարները վճարվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներով սահմանված չափով: Վճարման ենթակա գումարը կլորացվում է 10 դրամի ճշտությամբ:

20.2. Արժեթղթերի պահառության վճարները վճարվում են Բանկի սակագներով սահմանված չափով՝ ամսական կտրվածքով, հետվճարային սկզբունքով՝ հաջորդ ամսվա 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում: Եթե Հաշվետերը մինչև հաջորդ ամսվա 10-ը չի կատարել վճարում, ապա Բանկն իրավունք ունի վճարման ենթակա գումարն անակցեպտ գանձել Հաշվետիրոջ հաշվից (հաշվի առկայության դեպքում)՝ համաձայն Արժեթղթերի պահառության պայմանագրի՝ [eFO 72-00-650](#):

20.3. Եթե Բանկի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

20.4. Հաշվետիրոջ կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում կետանցման յուրաքանչյուր օրվա համար Բանկը կիրառում է տույժ՝ Պահառության պայմանագրով սահմանված չափով:

20.5. Երեք ամիս և ավելի ժամկետանց պարտավորություններ ունենալու դեպքում Բանկը կասեցնում է Պահառության պայմանագրի շրջանակներում Հաշվետերերին ծառայությունների մատուցումը:


20.6. Սույն ընթացակարգի 20.5 կետով նախատեսված ծառայության մատուցման կասեցման դեպքում, Բանկը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Կենտրոնական դեպոզիտարիային, ինչի արդյունքում դադարում է Բանկի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի սակագների կանոններով նախատեսված վճարների վճարումը կասեցված ծառայությունների ծավալին համապատասխան:

20.7. Պայմանագրի վերսկսման ցանկության դեպքում Հաշվետերը պարտավոր է անմիջապես վճարել սույն գլխով սահմանված բանաձևերով հաշվարկված Պայմանագրի վերսկսման վճարը:

20.8. Հաշվետերերին մատուցվող այլ ծառայությունների համար վճարները, որոնք կապված չեն Արժեթղթերի հաշվի պահպանման հետ, վճարվում են Հաշվետիրոջ կողմից ծառայության ստացման հանձնարարական կամ հարցում ներկայացնելու օրը:

20.9. Պայմանագրի վերսկսման համար Հաշվետերը վճարում է սույն գլխի բանաձև 1-ի համաձայն հաշվարկված պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարն այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է: Բանկը պարտավորվում է Կենտրոնական դեպոզիտարիային վճարել սույն ընթացակարգի 20.5 կետի հիման վրա կասեցված ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում սույն գլխի բանաձև 2-ի համաձայն հաշվարկված վճարը:

20.10. Բանաձև 1 և Բանաձև 2-ը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի սակագների մասին կանոններով սահմանված կարգով:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 19/11/19</i>	<i>Խմբագրություն 9</i>	<i>էջ 27/28</i>


ԳԼՈՒԽ 21. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐԸ

21.1. Հաշվետերերին արժեթղթերի պահառության միջնորդավորման ծառայության մատուցման գործընթացի հետ առնչվող ռիսկերը, դրանց հանդես գալու հավանականությունը և Բանկի վրա հնարավոր ազդեցությունը, ռիսկերի կառավարման, կանխարգելման և նվազեցման նպատակով ռիսկերի կառավարման, զսպման և ներքին հսկողության մեխանիզմները, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործում ներգրավված ստորաբաժանումները, անձինք ներկայացված են Գործառնական ռիսկերի քարտեզում՝ [eFO 80-00-20](#):











ԳԼՈՒԽ 22. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22.1. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 29-ից:

22.2. Սույն ընթացակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բանկի խորհրդի 24.09.2018թ. հաստատած «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում հաշվառվող արժեթղթերի պահառության ծառայությունների միջնորդավորման ընթացակարգը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ	ACBA 75 PR 40#6		
	Հաստատման ամսաթիվ 19/11/19	Խմբագրություն 9	էջ 28/28	

ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՈՍՔԱԳԻՑ

Առնչվող փաստաթղթեր	Քայլ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ			
			ԳԳՏ	ՖՏ	ՄՀԲ	Գ
	1					
TC 01-06	2		X	X	X	X
	3					
eFO 75-40-01	4			X		X
eFO 72-00-650, eFO 72-00-651, eFO 72-00-652, eFO 72-00-653, eFO 72-00-654, eFO 72-00-655, eFO 72-00-656	5		X			
eFO 75-40-03 eFO 75-40-04 eFO 75-40-05 eFO 75-40-06 eFO 72-00-227 eFO 72-00-228	6			X		X
eFO 75-40-07 eFO 75-40-08	7			X		X
eFO 75-40-09 eFO 75-40-10 eFO 75-40-11	8			X		X
eFO 75-40-13 eFO 75-40-14 eFO 75-40-15 eFO 75-40-16	9			X		X
	10					

Հապավումներ՝

ԳԳՏ՝ Գլխավոր գործադիր տնօրեն, **ՄՀԲ՝** Մարքեթինգային հաղորդակցությունների բաժին, **Գ՝** գործառնավար/հաճախորդների սպասարկման մասնագետ, **ՖՏ՝** Ֆինանսական տնօրինություն